ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ՎԱՐԴԱՆՅԱՆ ԲԱԳՐԱՏ ԼԵՌՆԻԿԻ

ԿԵՆՍԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՆԵՐՊԵՏԱԿԱՆ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

ԻԳ 00.01- «Քաղաքական գիտության տեսություն» մասնագիտությամբ քաղաքական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսություն

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ-2026

ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ

ВАРДАНЯН БАГРАТ ЛЕРНИКОВИЧ

ВНУТРИГОСУДАРСТВЕННЫЕ И МЕЖДУНАРОДНЫЕ ПРОЦЕДУРЫ ОБЕСПЕЧЕНИЯ БИОБЕЗОПАСНОСТИ В РЕСПУБЛИКЕ АРМЕНИЯ

Диссертация на соискание ученой степени кандидата политических наук по специальности 23.00.01 “Теория политической науки”

АВТОРЕФЕРАТ

ЕРЕВАН-2026

Ատենախոսության թեման հաստատվել է **Երևանի պետական համալսարանում**:
Գիտական ղեկավար՝
քաղաքական գիտությունների
դոկտոր, պրոֆեսոր **Ալեքսանյան Աշոտ Սեյրանի**
Պաշտոնական ընդդիմախոսներ՝
քաղաքական գիտությունների
դոկտոր, պրոֆեսոր **Քեռյան Գարիկ Միշայի**
քաղաքական գիտությունների թեկնածու,
դոցենտ **Շահվերդյան Առլեն Մայիսի**
Առաջատար կազմակերպություն՝ **Հայ-Ռուսական համալսարան**

Ատենախոսության պաշտպանությունը տեղի կունենա 2026 թվականի հունիսի 30-ին, ժամը 13:30-ին ԵՊՀ-ում գործող ՀՀ ԿԳՄՍՆ ԲԿԳԿ-ի «Քաղաքագիտություն և միջազգային հարաբերություններ» 056 մասնագիտական խորհրդում:
Հասցեն՝ ՀՀ, ք. Երևան, 0025, Ալեք Մանուկյան 1:
Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ԵՊՀ Սարգիս և Մարի Իզմիրլյանների անվան գրադարանում:
Սեղմագիրն առաքված է 2026 թվականի մայիսի 29-ին:

ՀՀ ԿԳՄՍՆ ԲԿԳԿ-ի 056 մասնագիտական խորհրդի
գիտական քարտուղար, քաղաքական
գիտությունների թեկնածու, դոցենտ Սարգսյան Առնակ Գեորգիի

Тема диссертации утверждена в ***Ереванском государственном*** **университете**
Научный руководитель:
доктор политических наук, профессор **Ашот Сейранович Алексанян**
Официальные оппоненты:
доктор политических наук, профессор **Гарик Мишаевич Керян**
кандидат политических наук, доцент **Арлен Маисович Шахвердян**
Ведущая организация: **Российско-Армянский университет**

Защита состоится 30 июня 2026 г, в 13:30 часов на действующем в ЕГУ специализированном совете 056 «Политология и международные отношения» МОНКС КВОН РА. Адрес: г. Ереван, ул. Алека Манукяна, 1, 0025, РА. С диссертацией можно ознакомиться в библиотеке имени Саркиса и Мари Измирлянов ЕГУ. Автореферат разослан 29 мая 2026г.

Научный секретарь специализированного совета 056 МОНКС КВОН РА,
кандидат политических наук, доцент **Арнак Георгиевич Саргсян**

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Թեմայի արդիականությունը: Ներկայումս քաղաքագիտական հետազոտությունների մարտահրավերներից մեկը կայուն զարգացմանն ազդող կենսանվտանգության գործընթացների և գործոնների ուսումնասիրությունն է: Համաշխարհային տնտեսությունում կայուն զարգացման հասնելու մեթոդների աճող արդիականությունը պայմանավորված է կենսանվտանգության մի քանի գործոններով. սոցիալ-տնտեսական գործընթացների աճող գլոբալացում, շրջակա միջավայրի վրա տեխնոլոգիական ճնշում և մոլորակի բնական պաշարների սպառում, որոնք անհրաժեշտություն են առաջացնում կայուն զարգացման հայեցակարգի կենսանվտանգության գործոնների գնահատման և գործնականում իրականացման համար: Կայուն զարգացման վերջին զեկույցների համաձայն Հայաստանը և հետխորհրդային մյուս երկրների մեծ մասը սահմանափակ առաջընթաց է ցուցաբերում ՄԱԿ-ի Կայուն զարգացման նպատակներին հասնելու գործում: Ավելին՝ կորոնավիրուսային հիվանդությունից (COVID-19) հետո տնտեսությունը հանգեցնում է հետխորհրդային երկրների համար առաջնահերթ զարգացման ոլորտների վերափոխման, ռեսուրսների վերաբաշխման և նոր բիզնես մոդելների մշակման, որոնք կարճաժամկետ հեռանկարում զգալիորեն կազդեն ՄԱԿ-ի որոշակի Կայուն զարգացման նպատակների վրա:

Ժամանակակից աշխարհում անվտանգային միջավայրի փոխակերպումներն ու հիբրիդային մարտահրավերների ի հայտ գալը հանգեցրել են նրան, որ ավանդական ռազմաքաղաքական սպառնալիքներին զուգահեռ առաջնային պլան են մղվել նաև ոչ ավանդական, այդ թվում՝ կենսաբանական սպառնալիքները: Կենսանվտանգության հիմնահարցերի ուսումնասիրության արդիականությունը գլոբալ մակարդակում պայմանավորված է մի շարք փոխկապակցված գործոններով, որոնք այս ոլորտը նեղ բժշկական կամ համաճարակաբանական տիրույթից տեղափոխել են ազգային անվտանգության և միջազգային հարաբերությունների դաշտ: Կենսատեխնոլոգիաների, սինթետիկ կենսաբանության և գենետիկական ինժեներիայի թռիչքաձև զարգացումը ստեղծել է «երկակի նշանակության

հետազոտությունների» աննախադեպ ռիսկեր: Գիտական նվաճումները, որոնք կոչված են բարելավելու մարդկության կյանքի որակը, միաժամանակ կարող են հեշտությամբ վերածվել զանգվածային ոչնչացման կամ թիրախային ազդեցության գործիքների: COVID-19 համավարակը ամբողջ աշխարհին ցույց տվեց, թե ինչպես կարող են կենսաբանական սպառնալիքները կաթվածահար անել համաշխարհային տնտեսությունը, խարխլել պետական ինստիտուտների հիմքերը և հանգեցնել հսկայական մարդկային կորուստների՝ անկախ պետությունների ռազմաքաղաքական հզորությունից: Ավելին, նորագույն տեխնոլոգիաների հասանելիությունը հանգեցրել է նրան, որ կենսաահաբեկչությունը դարձել է շոշափելի սպառնալիք ոչ միայն պետական դերակատարների, այլև ոչ պետական խմբավորումների կողմից: Դրան զուգահեռ, միջազգային մեխանիզմները, մասնավորապես՝ Կենսաբանական և տոքսինային զենքի արգելման կոնվենցիան, չունեն արդյունավետ վերահսկման և պատժամիջոցների կիրառման իրավաքաղաքական գործիքակազմ, ինչը գերտերությունների միջև ստեղծում է փոխադարձ անվստահության և կենսատեխնոլոգիական քողարկված մրցավազքի նախադրյալներ: Միաժամանակ, համավարակը անառարկելիորեն փաստեց, որ կենսանվտանգության հիմնահարցերը վերջնականապես ներթափանցել են միջազգային հարաբերությունների դաշտ՝ վերածվելով աշխարհաքաղաքական ազդեցության և քաղաքական ճնշում գործադրելու հզոր լծակների: Այս տենդենցի ամենացայտուն դրսևորումներից էր համավարակի ամենաթեժ փուլում ի հայտ եկած «պատվաստանյութային դիվանագիտությունը»: Կենսաբժշկական միջոցների տրամադրումը կամ դրանց հասանելիության սահմանափակումը գերտերությունների կողմից սկսեց կիրառվել որպես փափուկ ուժի գործիք՝ այլ երկրների արտաքին քաղաքական կողմնորոշումների վրա ազդելու և սեփական շահերն առաջ մղելու նպատակով:

Այս գլոբալ մարտահրավերների և միտումների ֆոնին Հայաստանի Հանրապետության կենսանվտանգության ապահովման ոլորտի կայացման հեռանկարների ուսումնասիրությունը ձեռք է բերում կենսական և հրատապ նշանակություն: Ներկայիս գլոբալիզացված աշխարհում կենսաբանական սպառնալիքները ունակ են անդառնալի

վնաս հասցնել պետության ժողովրդագրությանը, տնտեսությանը և հանրային կյանքին առհասարակ: Ուստի՝ ՀՀ ազգային անվտանգության ապահովման համար կենսաբանական ռիսկերի կանխարգելման, վաղ հայտնաբերման և արագ արձագանքման կայուն և արդյունավետ համակարգի ստեղծումը դառնում է ռազմավարական առաջնահերթություն: Միևնույն ժամանակ, ՀՀ-ի շուրջ ձևավորված բարդ և խոցելի աշխարհաքաղաքական միջավայրը բազմապատկում է ասիմետրիկ սպառնալիքների, այդ թվում՝ դիտավորյալ կենսաբանական ներգործության կամ կենսաահաբեկչության ռիսկերը և ստիպում է որդեգրել անվտանգության ապահովման առավել համապարփակ մոտեցումներ:

Հետազոտության թեմայի արդիականությունը պայմանավորված է նաև այն հանգամանքով, որ գլոբալ կենսանվտանգության ծրագրերի շրջանակներում և ԱՄՆ ֆինանսատեխնիկական աջակցությամբ արդիականացված հայաստանյան կենսալաբորատորիաները պարբերաբար վերածվում են աշխարհաքաղաքական շահարկումների, տեղեկատվական պատերազմների և հիբրիդային հարձակումների թիրախի: Այս գիտահետազոտական ենթակառուցվածքների վերաբերյալ ռուսական կողմի մշտական անհանգստությունները, պարբերաբար հնչող կոշտ հռետորաբանությունը և դրանց նպատակային նշանակությունը կասկածի տակ դնող հայտարարությունները հստակ ցույց են տալիս, թե ինչպես են զուտ հանրային առողջապահության կարիքները սպասարկող հաստատությունները դառնում քաղաքական լարվածության և անվտանգային դիլեմայի առանցք մեր տարածաշրջանում:

Հետևաբար՝ սույն հետազոտությունը խիստ արդիական է այնքանով, որքանով կոչված է վեր հանելու ոլորտի կառավարման հիմնախնդիրները՝ ինչպես բուն կենսաբանական սպառնալիքների, այնպես էլ դրանցով պայմանավորված աշխարհաքաղաքական ճնշումների առնչությամբ՝ նպատակ ունենալով առաջարկել կենսանվտանգության ապահովման գործունակ համակարգ, որը կլուծի Հայաստանի Հանրապետության առջև ծառացած մարտահրավերները:

Հիմնախնդրի գիտական մշակվածությունը: Կենսանվտանգության հիմնահարցերը, դրանց առանձին ասպեկտներն ու դրսևորումները հատկապես վերջին տարիներին պարբերաբար

հայտնվում են ինչպես միջազգային, այնպես էլ տարածաշրջանային հետազոտողների ուշադրության կենտրոնում: Միաժամանակ, հարկ է արձանագրել, որ թեման ունի գիտական մշակվածության խիստ անհամաչափ պատկեր:

Արևմտյան և միջազգային ակադեմիական շրջանակներում կենսանվտանգության քաղաքականացման և «անվտանգայնացման» հիմնահարցերն ունեն հարուստ տեսամեթոդաբանական բազա: Այս ուղղության քաղաքական հիմքերը դրվել են Կոպենհագենյան դպրոցի ներկայացուցիչներ՝ Բարրի Բուզանի[1], Օլե Վեվերի[2], Յաապ դե Վիլդեի[3] հիմնարար աշխատություններում, ովքեր մշակել են ոչ ավանդական սպառնալիքների անվտանգայնացման մեթոդաբանությունը: Հետագայում տեսության առողջապահական և կենսանվտանգային ասպեկտները զարգացրել են գլոբալ առողջապահական անվտանգության առաջատար տեսաբաններ՝ Ստեֆան Էլբեն[4], Քոլին Մակիննեսը[5] և Քրիստիան Էնեմարկը[6]: Նրանց աշխատություններում ուսումնասիրվում է, թե ինչպես են կենսաբանական սպառնալիքները դուրս գալիս հանրային առողջապահության շրջանակներից և դառնում քաղաքական օրակարգի մաս:

Թեմայի գիտական մշակվածության համատեքստում անկյունաքարային նշանակություն ունեն նաև ժամանակակից կենսանվտանգության առաջատար տեսաբաններ՝ Գրեգորի Կոբլենցի[7] և

---

[1] Buzan, B. (1991). New patterns of global security in the twenty-first century. International Affairs (Royal Institute of International Affairs 1944-), 431-451.

[2] Wæver, O. (1993). Securitization and desecuritization (Vol. 5). Copenhagen: Centre for Peace and Conflict Research.

[3] Buzan, B., Wæver, O., & De Wilde, J. (1998). Security: A new framework for analysis. Lynne Rienner Publishers.

[4] Elbe, S. (2007). Health and security. Contemporary security studies, 413-27.

[5] McInnes, C. (2009). National security and global health governance. In Global health governance: Crisis, institutions and political economy (pp. 42-59). London: Palgrave Macmillan UK.

[6] Enemark, C. (2007). Health security challenges: biological weapons and pandemic influenza. Security Challenges, 3(3), 131-143.

[7] Koblentz, G. (2003). Pathogens as weapons: The international security implications of biological warfare. International security, 84-122.

Թոմաս Ինգլսբիի[8], Ռայան Ն. Բարնեթի և Չակ Թոբինի[9], Նիկոլաս Դանաուեյի և Կավիտա Մ. Բերգերի[10], Լելա Բականիձեյի, Պաատա Իմնաձեյի և Դանա Պերկինսի[11] աշխատությունները, որոնք էապես հարստացրել են խնդրի քաղաքագիտական մեթոդաբանությունը: Հեղինակների հիմնարար աշխատությունները բացառիկ նշանակություն ունեն կենսաբանական սպառնալիքները միջազգային հարաբերությունների և անվտանգային դիլեմայի պրիզմայով արժևորելու տեսանկյունից:

Հետխորհրդային տարածաշրջանի և մասնավորապես Հարավային Կովկասի կենսանվտանգության հիմնահարցերին նվիրված գիտական գրականության զգալի մասը կրում է ընդգծված աշխարհաքաղաքական բնույթ՝ հաճախ ստվերելով խնդրի ինստիտուցիոնալ բաղադրիչները: Մասնավորապես՝ ռուսական գիտական

---

[8] Inglesby, T. V., Henderson, D. A., Bartlett, J. G., Ascher, M. S., Eitzen, E., Friedlander, A. M., ... & Working Group on Civilian Biodefense. (1999). Anthrax as a biological weapon: medical and public health management. Jama, 281(18), 1735-1745.

[9] Burnette, R.N., Tobin, C. (2021). The Biothreat Assessment as a Foundation for Biosecurity. In: Burnette, R.N. (eds) Applied Biosecurity: Global Health, Biodefense, and Developing Technologies. Advanced Sciences and Technologies for Security Applications. Springer, Cham, pp. 13-33. https://doi.org/10.1007/978-3-030-69464-7_2.

[10] Dunaway, N., Berger, K.M. (2021). The Changing Face of Biological Research and the Growing Role of Biosecurity. In: Burnette, R.N. (eds) Applied Biosecurity: Global Health, Biodefense, and Developing Technologies. Advanced Sciences and Technologies for Security Applications. Springer, Cham, pp. 89-119. https://doi.org/10.1007/978-3-030-69464-7_6.

[11] Bakanidze, L., Imnadze, P. & Perkins, D. (2010). Biosafety and biosecurity as essential pillars of international health security and cross-cutting elements of biological nonproliferation. BMC Public Health 10 (Suppl 1), S12. https://doi.org/10.1186/1471-2458-10-S1-S12.

դպրոցի ներկայացուցիչներ՝ Գ. Օնիշչենկոյի[12] և Դ. Բոգդանովի[13] աշխատություններում՝ ԱՊՀ տարածքում ԱՄՆ աջակցությամբ արդիականացված կենսալաբորատորիաների գործունեությունը, վերլուծվում է գլխավորապես անվտանգային սպառնալիքների և ռազմաքաղաքական հակադրության համատեքստում: Մինչդեռ արևմտյան փորձագիտական շրջանակները հիմնախնդիրը դիտարկում են «Համատեղ սպառնալիքների նվազեցման» ծրագրերի համատեքստում: ԱՄՆ Պաշտպանության դեպարտամենտի վտանգների նվազեցման գործակալության և միջազգային կառույցների զեկույցներում տարածաշրջանային կենսալաբորատորիաների արդիականացումը ներկայացվում է որպես գլոբալ առողջապահական անվտանգության օրակարգի մաս՝ ուղղված էնդեմիկ հիվանդությունների և վտանգավոր ախտածինների վաղ կանխարգելմանը: Այս բևեռացվածությունը թեմայի շուրջ ձևավորել է հարուստ տեղեկատվական-վերլուծական բազա, որն, այնուամենայնիվ, հաճախ հեռանում է գիտական օբյեկտիվությունից՝ սպասարկելով քաղաքական շահեր:

ՀՀ ակադեմիական շրջանակներում թեմայի մշակվածությունը կրում է խիստ հատվածական և նեղ դիսցիպլինար բնույթ[14]: Մինչ օրս իրականացված հետազոտությունների բացարձակ մեծամասնությունը պատկանում է բժշկագիտության և կենսաբանության ներկայացուցիչներին, ովքեր կենտրոնանում են առանձին էնդեմիկ հարուցիչների, լաբորատոր անվտանգության կանոնների պահպանման և հիվանդությունների մոնիթորինգի վրա: Սակայն, քաղաքագիտական և պետական կառավարման պրիզմայով կենսանվտանգության

---

[12] Онищенко, Г. Г., Попова, А. Ю., Топорков, В. П., Смоленский, В. Ю., Щербакова, С. А., & Кутырев, В. В. (2015). Современные угрозы и вызовы в области биологической безопасности и стратегия противодействия. Проблемы особо опасных инфекций, (3), 5-9.

[13] Богданов, Д. О., & Кирьяк, Д. А. (2023). Биологические лаборатории как источники угроз национальной безопасности. In Экологическая безопасность, здоровье и образование (pp. 67-72).

[14] Բատիկյան Հ.Գ., Միրզաբեկյան Ս.Ս., Հարությունյան Ն.Ա., Փեփոյան Ա.Զ., Կաթնաթթվային նոր պրոբիոտիկային շտամների հիման վրա ստացված յոգուրտների կենսաանվտանգության մի շարք ցուցանիշներ // Agriscience and Technology. 2023. № 1 (81), էջ 91-96:

հիմնահարցերը մնում են գրեթե չուսումնասիրված և չհամակարգված: Գիտական գրականության մեջ բացակայում են այնպիսի հիմնարար հետազոտություններ, որոնք վեր կհանեն ոլորտի տեսահայեցակարգային խնդիրները և կգնահատեն պետական գերատեսչությունների փոխգործակցության ու որոշումների կայացման մեխանիզմները:

Սույն ատենախոսությունը նպատակ ունի լրացնել վերոնշյալ տեսական և էմպիրիկ բացը՝ կենսանվտանգության հիմնախնդիրները նեղ բժշկական տիրույթից տեղափոխելով քաղաքագիտական և ազգային անվտանգության համակարգային վերլուծության հարթություն:

Հետազոտության օբյեկտը և առարկան: Սույն հետազոտության **օբյեկտը** ՀՀ կենսանվտանգության ապահովման ոլորտն է՝ որպես ազգային անվտանգության համակարգի բաղկացուցիչ մաս: Հետազոտության **առարկան** ՀՀ կենսանվտանգության ապահովման ոլորտի կարգավորման քաղաքական հիմքերն են, քաղաքական կառավարման արդի մեխանիզմները և գոյություն ունեցող մարտահրավերների հաղթահարման ուղիների վերաիմաստավորումը:

Հետազոտության նպատակը և խնդիրները: Հետազոտության նպատակն է բացահայտել և համակողմանիորեն վերլուծել ՀՀ-ում կենսանվտանգության համակարգի կայացման նախադրյալները և գիտագործնական առումով հիմնավորել ոլորտում կառավարման կենտրոնացված մոդելի ներդրման անհրաժեշտությունն ու արդյունավետությունը:

Այս նպատակին հասնելու համար սահմանվել են հետևյալ խնդիրները՝

- **Ուսումնասիրել** կենսանվտանգության հասկացության բովանդակությունը, ընդգրկման շրջանակներն ու պատմական էվոլյուցիան:
- **Ներկայացնել** կենսաբանական սպառնալիքների քաղաքական առանձնահատկություններն ու սոցիալ-տնտեսական հետևանքները ժամանակակից աշխարհում:
- **Դիտարկել** կենսաէթիկական հիմնահարցերը՝ որպես կենսանվտանգության համակարգի անքակտելի մաս ու կենսաբանական սպառնալիքների հնարավոր աղբյուր, ինչպես

նաև ուսումնասիրել վերջիններիս հաղթահարման արդյունավետ ուղիները:

- **Գնահատել** քաղաքական ինստիտուտների դերն ու դրանց կայունության նշանակությունը կենսաբանական սպառնալիքներին արդյունավետորեն հակազդելու գործընթացում՝ հիմնվելով Գլոբալ առողջապահական անվտանգության համաթվի տվյալների վերլուծության վրա:
- **Իրականացնել** միջազգային փորձի համեմատական վերլուծություն՝ ուսումնասիրելով Ամերիկայի Միացյալ Նահանգների, Ռուսաստանի Դաշնության և Չինաստանի Ժողովրդական Հանրապետության կենսանվտանգության համակարգերի կառավարման ընթացակարգերն ու առանձնահատկությունները:
- **Քննության առնել** Հայաստանի Հանրապետության կենսանվտանգության ապահովման ոլորտը կարգավորող իրավաքաղաքական միջավայրը, մարտահրավերներն ու հրամայականները:

Հետազոտության տեսամեթոդական հիմքերը: Հետազոտության շրջանակներում օգտագործվել են ինչպես հատուկ, այնպես էլ ընդհանուր իմացաբանական մեթոդներ, որոնք կիրառվում են տարբեր գիտություններում: Հետազոտության մեթոդաբանությունը հենվում է որակական վերլուծության սկզբունքների վրա՝ նպատակ ունենալով ապահովել ուսումնասիրվող երևույթների խորքային և համատեքստային ըմբռնում: Հետազոտությունը հիմնված է առաջնային և երկրորդային սկզբնաղբյուրների լայն շրջանակի վրա՝ ներառյալ պաշտոնական փաստաթղթեր, բազմալեզու ակադեմիական գրականություն և վերլուծական զեկույցներ: Հիմնախնդրի տարբեր ասպեկտների ուսումնասիրությամբ զբաղվող հեղինակների աշխատանքները ենթարկվել են համապարփակ վերլուծության և ներկայացվել են ատենախոսության մեջ: Այս էմպիրիկ բազայի վերլուծության համար կիրառվել են հետազոտական մի շարք մեթոդներ: Պատմահամեմատական մեթոդը հնարավորություն է տվել բացահայտել «կենսանվտանգություն» հասկացության ծագումնաբանությունը, զարգացման փուլերը և բովանդակային փոխակերպումները:

Համակարգային վերլուծության մեթոդը թույլ է տվել կենսանվտանգությունը դիտարկել ոչ թե որպես էկոլոգիական անվտանգության ենթաճյուղ, այլ որպես փոխկապակցված տարրերից բաղկացած ինքնուրույն համակարգ, ինչպես նաև նախանշել դրա տեղն ու դերը ՀՀ անվտանգային ճարտարապետության մեջ: Համեմատական վերլուծության մեթոդը օգտագործվել է Ամերիկայի Միացյալ Նահանգների, Ռուսաստանի Դաշնության և Չինաստանի Ժողովրդական Հանրապետության կենսանվտանգության համակարգերի կառավարման ընթացակարգերը, խնդիրներն ու առանձնահատկությունները ուսումնասիրելու նպատակով: Վիճակագրական և էմպիրիկ վերլուծության մեթոդները կիրառվել են Գլոբալ առողջապահության անվտանգության համաթվի տվյալների բազան մշակելու և քաղաքական ինստիտուտների կայունության ու կենսաբանական սպառնալիքների կանխարգելման արդյունավետության միջև առկա կապն ի ցույց դնելու համար: Համակարգային-կառուցվածքային մեթոդի միջոցով ուսումնասիրվել և հիմնավորվել է ՀՀ կենսանվտանգության ապահովման ոլորտում կառավարման կենտրոնացված մոդելի ներդրման անհրաժեշտությունը:

Այսպիսով՝ հետազոտության մեթոդաբանական հիմքը հնարավորություն է տալիս համակցված ձևով վերլուծել կենսանվտանգության ոլորտի միջազգային և ներպետական հիմնախնդիրները՝ ապահովելով տեսական հիմնավորում, տվյալների համեմատական գնահատում և գործնական եզրակացությունների ձևավորում:

Ատենախոսության գիտական նորույթը: Սույն աշխատանքի գիտական նորույթը կայանում է նրանում, որ հայաստանյան հետազոտական դաշտում և ակադեմիական միջավայրում առաջին անգամ իրականացվել է կենսանվտանգության ապահովման հիմնախնդիրների համապարփակ ուսումնասիրություն՝ քաղաքագիտության և ազգային անվտանգության տեսության հարացույցի շրջանակներում՝ նպաստելով թեմայի վերաբերյալ գիտականորեն նոր և խորքային հայացքի ձևավորմանը: Ըստ այդմ՝ իրականացված հետազոտության արդյունքում արձանագրվել են գիտական նորույթ պարունակող հետևյալ դրույթները.

- Մասնագիտական գրականության մեջ առկա մոտեցումների և հայեցակարգերի վերլուծության հիման վրա առաջարկվել է

«կենսանվտանգություն» հասկացության նոր սահմանում, որն իր մեջ ներառում է նաև կենսաէթիկական հիմնահարցերը՝ դիտարկելով դրանք որպես կենսանվտանգության համակարգի անքակտելի մաս և կենսաբանական սպառնալիքների հնարավոր աղբյուր:

- Հիմնավորվել է էկոլոգիական անվտանգության համակարգից կենսանվտանգության տարանջատման, ինչպես նաև դրա՝ որպես պետության ազգային անվտանգության ինքնուրույն և ռազմավարական ուղղության կայացման անհրաժեշտություն:
- Համակողմանիորեն քննության է առնվել քաղաքական ինստիտուտների դերն ու դրանց կայունության նշանակությունը կենսաբանական սպառնալիքների կանխարգելման գործընթացում: Ապացուցվել է, որ քաղաքական ինստիտուտների շարունակական բարեփոխումն ու արդիականացումը հանդիսանում են պետության դիմակայունության բարձրացման և ապագա կենսաբանական սպառնալիքներին ու համավարակներին արդյունավետորեն հակազդելու առանցքային նախապայման:
- Միջազգային փորձի վերլուծության արդյունքում հիմնավորվել է, որ կենսանվտանգության ոլորտի արդյունավետ կառավարման համար անհրաժեշտ է անցում կատարել կառավարման կենտրոնացված համակարգի պարադիգմին, որտեղ կենսանվտանգությունը դիտարկվում է որպես ինքնուրույն և ռազմավարական ուղղություն:
- Իրավանորմատիվային մակարդակում համապարփակ կերպով ուսումնասիրության է ենթարկվել ՀՀ կենսանվտանգության ոլորտը կարգավորող օրենսդրական դաշտը և նախանշվել են հիմնական բացթողումները: Հիմնավորվել է, որ ոլորտի հատվածական կարգավորման խնդիրը լուծելու և իրապես գործուն կենսանվտանգության համակարգ ձևավորելու համար անհրաժեշտ է միասնական հայեցակարգային ռազմավարության, ոլորտային մայր օրենքի և ավելի նեղ ու թիրախային հարցերը կարգավորող ենթաօրենսդրական ակտերի մշակում, ընդունում և ներդաշնակ կիրառում:
- Կենսանվտանգության ապահովման կենտրոնացված կառավարման պարադիգմի շրջանակներում մշակվել և առաջարկվել է ՀՀ կենսանվտանգության ոլորտի կառավարման համալիր մոդել, որտեղ

հստակ նախանշվել են իրականացման ենթակա մասնագիտական ու օպերատիվ գործառույթները, ինչպես նաև սահմանվել են դրանց իրագործման համար պատասխանատու պետական գերատեսչություններն ու վերջիններիս միջև փոխգործակցության մեխանիզմները:

Ատենախոսության գիտատեսական և կիրառական նշանակությունը: Աշխատանքի գիտատեսական նշանակությունը կայանում է նրանում, որ այն համալրում և հարստացնում է կենսանվտանգության հիմնախնդիրների վերաբերյալ առկա գիտելիքների շրջանակը՝ առաջարկելով նոր տեսական մոտեցումներ դրանց ընկալման, ընդգրկման շրջանակների, իրավաքաղաքական ասպեկտների և կառավարման առանձնահատկությունների մեկնաբանության համար: Տեսական առումով կատարված աշխատանքը կարելի է դիտարկել որպես քաղաքագիտության մեջ նոր զարգացող միջոլորտային գիտաճյուղի տեսական հենքի ընդլայնում, ինչը հնարավորություններ կստեղծի հետագա ուսումնասիրությունների և գիտական հիմնավորումների համար:

Աշխատանքի կիրառական նշանակությունը կայանում է նրանում, որ վերջինիս արդյունքները կարող են օգտագործվել կենսանվտանգության ապահովման ոլորտում, պետական քաղաքականության մշակման և արդյունավետության գնահատման գործընթացներում: Մասնավորապես՝ հետազոտության արդյունքները կարող են օգտագործվել պետական կառավարման մարմինների կողմից՝ ոլորտը կարգավորող հայեցակարգային փաստաթղթերի և իրավական ակտերի մշակման, առկա օրենսդրական բացերի վերացման, ինչպես նաև ճգնաժամային կառավարման արդյունավետ մեխանիզմների ներդրման գործընթացում: Աշխատանքում մշակված հայեցակարգային մոտեցումները, նոր սահմանումներն ու քաղաքագիտական վերլուծությունները կարող են կիրառվել նաև գիտակրթական ոլորտում՝ նախադրյալներ ստեղծելով կենսանվտանգության և կենսաքաղաքականության ուղղությամբ հետագա ակադեմիական ուսումնասիրությունների համար:

Հետազոտության արդյունքների փորձարկումը և հրապարակումները: Ատենախոսության հիմնական դրույթներն արտացոլվել են գրախոսվող գիտական պարբերականներում հրապարակված հեղինակային գիտական հոդվածներում:

Ատենախոսության կառուցվածքը: Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք հիմնական գլուխներից, եզրակացությունից և օգտագործված գրականության ցանկից:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՌՈՏ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ատենախոսության **ներածությունում** հիմնավորվում է թեմայի արդիականությունը, առաջադրվում են օբյեկտը, առարկան, նպատակն ու խնդիրները, ներկայացվում են տեսամեթոդական հիմքն ու գիտական նորույթը, աշխատանքի տեսական և կիրառական նշանակությունը, ինչպես նաև մատնանշվում են վերջինիս փորձարկման և կառուցվածքի մասին տեղեկությունները:

Առաջին գլուխը՝ **«Կենսանվտանգության տեսական և գործառնական հիմքերը»**, նվիրված է հետազոտության տեսական հիմնավորմանը, որի նպատակն է ստեղծել ամուր հայեցակարգային հենք «կենսանվտանգություն» եզրույթի բովանդակային ընկալումն ու ընդգրկման շրջանակները վերլուծելու, ինչպես նաև պետության ազգային անվտանգության համակարգում դրա տեղն ու դերը նախանշելու համար:

Առաջին գլխի առաջին ենթագլխում՝ **««Կենսանվտանգություն» հասկացության սահմանումը, ընդգրկման շրջանակները և բովանդակային փոխակերպումները»** ներկայացվում է հասկացության ծագումնաբանությունը, պատմական էվոլյուցիան և եզրույթի վերաբերյալ ակադեմիական շրջանակներում առկա մոտեցումները: Քննության են առնվում նաև կենսաէթիկական հիմնահարցերը՝ որպես կենսանվտանգության համակարգի անքակտելի բաղադրիչ: Համապարփակ անդրադարձ է կատարվում նաև կենսանվտանգության և էկոլոգիական անվտանգության փոխառընչություններին՝ Միշել Ֆուկոյի «կյանքի կառավարման» և «կենսաքաղաքականության» հայեցակարգերի շրջանակներում: Ենթագլուխը հնարավորություն է տալիս գալ եզրահանգման, որ ժամանակակից կենսատեխնոլոգիական հեղափոխության համատեքստում «կենսանվտանգություն» հասկացության սահմանումներն ունեն հայեցակարգային բացեր և չեն արտացոլում «կենսանվտանգություն» եզրույթի տեսական և գործնական կիրառման ողջ շրջանակը: Միևնույն ժամանակ արձանագրվել է, որ կենսանվտանգությունն այլևս դուրս է եկել էկոլոգիական անվտանգության «ստվերից» և դասակարգվում է որպես ազգային անվտանգության համակարգի առանցքային ու ինքնուրույն ուղղություն:

Գլխի երկրորդ ենթագլխում՝ **«Կենսաբանական սպառնալիքների տեսակները և քաղաքական առանձնահատկությունները»**

ներկայացվում են վարակիչ հիվանդությունների, լաբորատոր պատահարների, գենետիկորեն մոդիֆիկացված օրգանիզմների և կենսաբանական զենքերի ընդհանուր բնութագրերը, ինչպես նաև դրանց սոցիալ-քաղաքական հետևանքները ժամանակակից հասարակությունների համար: Ենթագլխում ցույց է տրվում, որ կենսաբանական սպառնալիքները, դուրս գալով առողջապահության ոլորտի շրջանակներից, վերածվում են հասարակությունների սոցիալ-տնտեսական կառուցվածքն ու պետությունների աշխարհաքաղաքական առաջնահերթությունները:

Այս գլխի երրորդ ենթագլխում՝ **«Կենսաէթիկայի քաղաքական չափումները և բարոյական հրամայականները»** ներկայացվում է կենսաէթիկայի ձևավորման և զարգացման նախապատմությունը, կենսաէթիկական հիմնահարցերի բնույթն ու արդիականությունը: Քննության են առնվում կենսաէթիկայի չորս հիմնարար սկզբունքները և ընթացակարգային լեգիտիմության գաղափարը՝ որպես կենսաէթիկական հիմնահարցերի լուծման արդյունավետ ճանապարհ: Հիմնավորվում է, որ ժամանակակից հասարակությունների արժեքային և մշակութային բազմակարծության պայմաններում քաղաքականության խնդիրը ոչ թե հասարակությանը որևէ ծայրահեղ դիրքորոշում պարտադրելն է, այլ որոշումների կայացման արդար, թափանցիկ և ներառական ընթացակարգերի ապահովումը:

Երկրորդ գլուխը՝ «**Կենսանվտանգության ապահովման քաղաքական մեխանիզմները և կառավարման միջազգային ընթացակարգերը**», խորամուխ է լինում կենսանվտանգության ապահովման պրակտիկաների՝ տնտեսապես զարգացած երկրների փորձառության ուսումնասիրության մեջ՝ ընդգծելով կենսաբանական սպառնալիքների դեմ պայքարի արդյունավետությունը տարբեր երկրների համապատկերում:

Երկրորդ գլխի առաջին ենթագլխում՝ «**Քաղաքական ինստիտուտների կայունության գործոնը կենսաբանական սպառնալիքների կանխարգելման գործընթացում**», ներկայացվում է օրենսդիր, գործադիր և դատական իշխանությունների լիազորություններն ու պատասխանատվության շրջանակը՝ կենսաբանական ռիսկերի կառավարման գործընթացում: Հատուկ ուշադրություն է դարձվում Գլոբալ

առողջապահության անվտանգության համաթվի տվյալներին՝ քաղաքական ինստիտուտների կայունության և կենսաբանական սպառնալիքների դեմ պայքարի արդյունավետության միջև կապը նկարագրելու համար: Ենթագլխի եզրափակիչ միտքն այն է, որ տնտեսական հզորությունն ու տեխնոլոգիական կարողություններն ինքնին բավարար չեն կենսաբանական սպառնալիքների դեմ արդյունավետ պայքարելու համար, եթե դրանք չեն ուղեկցվում կայուն, թափանցիկ և հաշվետու կառավարման մեխանիզմներով

Գլխի երկրորդ ենթագլխում՝ «**Կենսանվտանգության ոլորտի կառավարման ընթացակարգերը միջազգային փորձի համատեքստում**», համակողմանիորեն քննարկվում են Ամերիկայի Միացյալ Նահանգների, Ռուսաստանի Դաշնության և Չինաստանի Ժողովրդական Հանրապետության կենսանվտանգության ապահովման ոլորտի տեսահայեցակարգային շրջանակներն ու կառավարման ընթացակարգերը: Ուիլյամ Ռոսս Էշբիի «Անհրաժեշտ բազմազանության օրենքի» և Ջորջ Ցեբելիսի «Վետո կիրառող դերակատարներ»-ի տեսության շրջանակներում մանրամասն վերլուծվում է կենսանվտանգության ոլորտի կառավարման արդյունավետությունը բարձրացնելու նպատակով կառավարման ապակենտրոնացված մոդելից հրաժարվելու և կառավարման կենտրոնացված մոդելին անցում կատարելու հնարավորություններն ու մարտահրավերները: Եզրահանգումն այն է, որ կենսանվտանգության ապահովման ոլորտի ապակենտրոնացված կառավարման մոդելն թերևս գործունակ է միայն հարաբերականորեն կայուն, ոչ ճգնաժամային իրավիճակներում, սակայն գլոբալ համավարակների կամ կենսաբանական ահաբեկչության պայմաններում հիշյալ մոդելը վերածվում է անարդյունավետ և իներտ համակարգի՝ պայմանավորված տեղեկատվության փոխանակության խնդիրներով, միջգերատեսչական մրցակցությամբ և որոշումների կայացման դանդաղկոտությամբ:

Ատենախոսության երրորդ գլուխը՝ «**ՀՀ կենսանվտանգության ապահովման ոլորտի կայացման իրավաքաղաքական նախադրյալները և զարգացման հեռանկարները**», նվիրված է Հայաստանի Հանրապետությունում կենսանվտանգության ապահովման գործընթացի ներկա վիճակի, ինչպես նաև ոլորտում պետական-քաղաքական

կառավարման արդյունավետության բարձրացման ռազմավարական մոտեցումների ու չափանիշների ուսումնասիրությանը:

Երրորդ գլխի առաջին ենթագլխում՝ «**Կենսանվտանգության ապահովման գործընթացի ներկա վիճակը Հայաստանի Հանրապետությունում**», համապարփակ կերպով ուսումնասիրության է ենթարկվել ՀՀ կենսանվտանգության ոլորտը կարգավորող օրենսդրական դաշտը և նախանշվել են հիմնական մարտահրավերներն ու բացթողումները: Անդրադարձ է կատարվել նաև Հայաստանի Հանրապետությունում գործող կենսալաբորատորիաների շուրջ ձևավորված արտաքին քաղաքական մարտահրավերներին, ինչպես նաև երկրի աշխարհաքաղաքական ու տարածաշրջանային առանձնահատկություններով պայմանավորված՝ «կենսանվտանգություն» հասկացության նոր քաղաքական պարադիգմի ձևակերպման անհրաժեշտությանը: Ենթագլուխը եզրափակվում է այն պնդմամբ, որ չնայած ոլորտին առնչվող մի շարք իրավական ակտերի առկայությանը, այնուամենայնիվ Հայաստանի Հանրապետությունում կենսանվտանգության ապահովման գործընթացը ինստիտուցիոնալ առումով դեռևս չի կայացել: Առանձին իրավական ակտերի միջոցով ոլորտը գուցե թե հատվածաբար կարգավորվել է, սակայն դա վճռական ազդեցություն չի ունենում համակարգի ամբողջական ձևավորման և կայացման հարցում:

Գլխի երկրորդ ենթագլխում՝ «**Կենսանվտանգության ապահովման ոլորտում կենտրոնացված կառավարման համակարգի ներդրման հեռանկարները Հայաստանի Հանրապետությունում**», վերլուծվում են կենսանվտանգության ոլորտի գործնական կառավարման ընթացակարգերը, նախանշվում են հիմնական խնդիրներն ու մարտահրավերները, քննարկվում է նաև ՀՀ պետական կառավարման համակարգի մարմինների բարեփոխումների և արդիականացման անհրաժեշտությունը՝ կենսաբանական սպառնալիքների դեմ պայքարի արդյունավետությունը բարձրացնելու նպատակով: Անդրադարձ է կատարվում նաև ոլորտի կայացման համատեքստում խորհրդարանական վերահսկողության մեխանիզմների ձևավորման անհրաժեշտությանը: Որպես ենթագլխի ամփոփում նկարագրվում է ՀՀ կենսանվտանգության ոլորտի կառավարման համալիր մոդել, որտեղ հստակ սահմանվում են

ոլորտին առնչվող մասնագիտական և օպերատիվ գործառույթները, ինչպես նաև դրանց իրականացման համար պատասխանատու գերատեսչությունները:

Եզրակացություններ բաժնում ներկայացված են հետազոտության հիմնական արդյունքները, որոնցից հարկ է առանձնացնել ստորև բերվածները՝

- Ժամանակակից գլոբալ մարտահրավերները, շրջակա միջավայրի փոխակերպումները և կենսատեխնոլոգիաների աննախադեպ զարգացումները ընդգծել են կենսանվտանգության հիմնահարցերի հրատապությունը, ինչի արդյունքում «կենսանվտանգություն» հասկացությունը ենթարկվել է արմատական էվոլյուցիայի՝ նեղ լաբորատոր-առողջապահական շրջանակներից վերածվելով ազգային և գլոբալ անվտանգության առանցքային ու բազմաշերտ բաղադրիչի:
- «Կենսանվտանգություն» հասկացության գոյություն ունեցող սահմանումներն անտեսում են կենսաէթիկական հիմնահարցերը, ինչի արդյունքում գիտական նվաճումները, բարոյական և էթիկական կարգավորումների բացակայության պայմաններում, կարող են վերածվել գոյաբանական սպառնալիքի: Ուստի՝ հրամայական է դառնում կենսանվտանգության նոր, առավել համապարփակ սահմանման կիրառումը, որտեղ կենսաէթիկական հիմնահարցերը դիտարկվում են որպես կենսանվտանգության համակարգի անքակտելի բաղադրիչ:
- Արդի պլյուրալիստական հասարակություններում զուտ բարոյագիտական սկզբունքների կիրառումն այլևս անբավարար է արժեքային, մշակութային և կրոնական խորը բազմաշերտություն ունեցող կենսաէթիկական հիմնախնդիրների համապարփակ հանգուցալուծման համար: Համընդհանուր բարոյական կոնսենսուսի ձևավորման անհնարինությունն ու դրանից բխող հանրային բախումների վտանգը պահանջում են հայեցակարգային անցում կատարել կառավարման գործընթացային և ինստիտուցիոնալ մեխանիզմներին: Այս համատեքստում առանցքային նշանակություն է ձեռք բերում որոշումների կայացման ընթացակարգային լեգիտիմությունը՝ վկայելով, որ գործընթացի ներառականությունը,

թափանցիկությունն ու արդարությունը նույնքան կարևոր են, որքան բուն որոշման բովանդակությունը:

- Միշել Ֆուկոյի «կենսաքաղաքականության» և «կյանքի կառավարման» հարացույցների հիման վրա տեսականորեն հիմնավորվել է, որ արդի պետության գլխավոր նպատակակետը ոչ թե պարզապես ֆիզիկական տարածքի պաշտպանությունն է, այլ բնակչության՝ որպես կենսաբանական զանգվածի կենսունակության ապահովումն ու կառավարումը: Այս համատեքստում էկոլոգիական անվտանգությունը հանդես է գալիս ոչ թե որպես գերակա ուղղություն, այլ որպես կենսանվտանգության ապահովմանն ուղղված անհրաժեշտ գործիքակազմ և միջավայրի պահպանման մեխանիզմ:
- Հետազոտության արդյունքները փաստում են, որ կենսաբանական սպառնալիքները, դուրս գալով առողջապահության ոլորտի շրջանակներից, վերածվում են հասարակությունների սոցիալ-տնտեսական կառուցվածքն ու պետությունների աշխարհաքաղաքական առաջնահերթությունները: Ժողովրդագրական և տնտեսական ցնցումների հետևանքով դրանք պարտադրում են վերանայել պետական կառավարման մոդելները, մարդու իրավունքների սահմաններն ու միջազգային համագործակցության սկզբունքները: Մասնավորապես, իրավական և էթիկական հարթություններում օրակարգային է դառնում հանրային անվտանգության ապահովման և անհատական ազատությունների միջև առկա նուրբ սահմանագծի վերաիմաստավորումը՝ անխուսափելի դարձնելով հավաքական անվտանգության և մարդու հիմնարար իրավունքների միջև նոր, արդարացի հավասարակշռության ձևավորումը:
- Քաղաքական ինստիտուտների դերը կենսաբանական սպառնալիքներին արդյունավետ հակազդելու գործընթացում համապարփակ բնույթ ունի, ներառելով՝ իրավական կարգավորումից մինչև հանրային հաղորդակցություն, ֆինանսավորումից մինչև միջազգային համագործակցություն: Ճգնաժամային իրավիճակներում կենսանվտանգության ապահովման գլխավոր նախապայմանը իշխանության տարբեր օղակների միջև գործառույթների հստակ տարանջատումն է՝ բացառելով լիազորությունների կրկնօրինակումն ու ռեսուրսների համար ոչ կառուցողական մրցակցությունը:

Հետևաբար՝ քաղաքական ինստիտուտների շարունակական բարեփոխումն ու արդիականացումը հանդիսանում են պետության դիմակայունության բարձրացման և ապագա կենսաբանական սպառնալիքներին ու համավարակներին արդյունավետորեն հակազդելու առանցքային նախապայման:

- Միջազգային փորձի վերլուծությունը, ինչպես նաև Ուիլյամ Ռոսս Էշբիի «Անհրաժեշտ բազմազանության օրենքի» և Ջորջ Ցեբելիսի «Վետո կիրառող դերակատարների» (Veto Players) տեսության շրջանակներում կատարված համակողմանի ուսումնասիրությունները փաստում են, որ կենսաբանական սպառնալիքներին հակազդելու գործընթացում ապակենտրոնացված կառավարման համակարգը գործունակ է միայն կայուն, ոչ ճգնաժամային պայմաններում, սակայն գլոբալ համաճարակների կամ կենսահաբեկչության պարագայում այս համակարգը դրսևորում է իներտություն և անարդյունավետություն՝ տեղեկատվության փոխանակման խոչընդոտների, միջգերատեսչական մրցակցության և որոշումների կայացման դանդաղկոտության պատճառով:
- ՀՀ կենսանվտանգության ապահովման ոլորտի իրավաքաղաքական կարգավորման ներկայիս վիճակի համալիր ուսումնասիրությունը փաստում է, որ չնայած ոլորտին առնչվող մի շարք իրավական ակտերի առկայությանը, այնուամենայնիվ, Հայաստանի Հանրապետությունում կենսանվտանգության ապահովման գործընթացը ինստիտուցիոնալ առումով դեռևս չի կայացել: Առանձին իրավական ակտերի միջոցով ոլորտը գուցե թե հատվածաբար կարգավորվել է, սակայն դա վճռական ազդեցություն չի ունենում համակարգի ամբողջական ձևավորման և կայացման հարցում:
- Հայաստանի Հանրապետության կենսանվտանգության համակարգը, մասնավորապես՝ արևմտյան ֆինանսավորմամբ գործող կենսալաբորատորիաների առկայությունը, հայտնվել է գերտերությունների կենսաքաղաքական մրցակցության կիզակետում՝ զուտ հանրային առողջապահական ենթակառուցվածքից վերածվելով արտաքին քաղաքական ճնշումների գեներացման աղբյուրի: Այսօրինակ բարդ աշխարհաքաղաքական միջավայրում Հայաստանի՝ որպես փոքր պետության կենսանվտանգային քաղաքականության արդյունավետությունը ուղղակիորեն պայմանավորված է

հավասարակշռված և խիստ պրագմատիկ ռազմավարության որդեգրմամբ:

Հենվելով ատենախոսության եզրակացությունների վրա՝ ներկայացնում ենք հետևյալ կիրառական առաջարկությունները.

- Հիմք ընդունելով գիտական գրականության մեջ առկա հիմնարար մոտեցումները սույն հետազոտության արդյունքում՝ մեր կողմից առաջարկվում է «կենսանվտանգություն» հասկացության նոր, առավել ամբողջական և համապարփակ սահմանում, որտեղ կենսաէթիկական հիմնահարցերը դիտարկվում են որպես կենսանվտանգության համակարգի անքակտելի բաղադրիչ:
- Արդի մարտահրավերների պայմաններում Հայաստանի Հանրապետության կենսանվտանգության ապահովման ոլորտի ներկայիս հատվածական կարգավորման խնդիրը լուծելու և իրապես գործուն ու արդյունավետ կենսանվտանգության ազգային համակարգ ձևավորելու համար առաջարկվում է մշակել և ընդունել տրամաբանորեն փոխկապակցված և հիերարխիկ իրավաքաղաքական փաստաթղթերի փաթեթ՝ հայեցակարգային ռազմավարություն, հիմնական օրենք և ենթաօրենսդրական ակտեր, որը խարսխված կլինի դեդուկտիվ մոդելի՝ ընդհանուր նպատակադրումից դեպի նեղ տեխնիկական կարգավորումներ անցնելու տրամաբանության վրա:
- Հայաստանի Հանրապետության կենսանվտանգության ապահովման ոլորտի ինստիտուցիոնալ կայացման նպատակով առաջարկվում է գործող ապակենտրոնացված կառավարման ձևաչափից անցում կատարել կենտրոնացված համակարգի: Սա ենթադրում է այնպիսի գերատեսչության (կենսանվտանգության ապահովման ազգային մարմին) ստեղծում, որը «մեկ պատուհանի» սկզբունքով կապահովի ոլորտի միասնական կառավարումը և օժտված կլինի ոչ միայն խորհրդատվական, այլև իմպերատիվ լիազորություններով:
- Կենսաբանական սպառնալիքներին հակազդելու կայուն և հուսալի մեխանիզմների ձևավորման նպատակով առաջարկվում է Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ծառայության և Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի կազմում ստեղծել կենսանվտանգության ապահովման հարցերով

մասնագիտացված ստորաբաժանումներ, ինչը հնարավորություն կտա պատշաճ կերպով արձագանքել կենսահաբեկչական գործողություններին և կբարձրացնի կենսաբանական սպառնալիքների նկատմամբ երկրի ներքին անվտանգության մակարդակը:

Ատենախոսության հիմնադրույթներն արտացոլված են հետևյալ գիտական հոդվածներում

1. Վարդանյան, Բ. (2023). Կենսանվտանգությունը որպես ազգային անվտանգության հիմնական բաղադրիչ և դրա արժեքաբանական հիմքերը. Բանբեր Երևանի համալսարանի, Միջազգային հարաբերություններ, Քաղաքագիտություն, 14(3 (42)), 84-91. doi.org/10.46991/BYSU:D/2023.14.3.084
2. Abajyan, K., & Vardanyan, B. (2023). Peace Pedagogies in Bosnia and Herzegovina: Theory and Practice in Formal Education, edited by Larisa Kasumagić-Kafedžić, and Sara Clarke-Habibi. Springer, Cham. 2023. XVIII, 343 pp. https://doi. org/10.1007/978-3-031-26246-3. Journal of Political Science: Bulletin of Yerevan University, 2(3 (6)), 98-103. doi: 10.46991/JOPS/2023.2.6.098
3. Վարդանյան, Բ. (2024). Կենսանվտանգության ապահովման ոլորտում ՀՀ պետական քաղաքականության կայացման նախադրյալները. Բանբեր Երևանի համալսարանի, Միջազգային հարաբերություններ, Քաղաքագիտություն, 15(3 (45)), 61-71. doi.org/10.46991/BYSU.D/2024.15.3.061
4. Վարդանյան, Բ. (2024). Կենսաէթիկան ժամանակակից քաղաքագիտության համակարգում. Քաղաքական պատասխանատվության ձևավորման կենսաէթիկան և բարոյական հրամայականները. Գիտական Արցախ/Научный Арцах/Scientific Artsakh, (4 (24)), 99-107. doi: 10.52063/25792652-2024.4.23-99
5. Վարդանյան, Բ. (2025). Ռուսաստանի Դաշնության կենսանվտանգության համակարգի իրավաքաղաքական հիմնախնդիրները և դրանց ազդեցությունը Հայաստանի Հանրապետության կենսանվտանգության ապահովման միջավայրի վրա. Գիտական տեղեկագիր, 3(50), 109-131. DOI: 10.24234/scientific.v3i50.244
6. Վարդանյան, Բ. (2026). Կենսանվտանգության ապահովման ոլորտի ինստիտուցիոնալ մեխանիզմների արդիականացման հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում. Տարածաշրջան և աշխարհ, 1 (62), 31-40. DOI:10.58587/18292437-2026.1-31
7. Վարդանյան, Բ. (2026). Կենսանվտանգության բովանդակային փոխակերպումները և դերը ազգային անվտանգության համակարգում. նոր հայեցակարգային մոտեցում. Տարածաշրջան և աշխարհ, 2 (63), 51-57. DOI: 10.58587/18292437-2026.2-51

ВАРДАНЯН БАГРАТ ЛЕРНИКОВИЧ

ВНУТРИГОСУДАРСТВЕННЫЕ И МЕЖДУНАРОДНЫЕ ПРОЦЕДУРЫ ОБЕСПЕЧЕНИЯ БИОБЕЗОПАСНОСТИ В РЕСПУБЛИКЕ АРМЕНИЯ

Диссертация на соискание научной степени кандидата политических наук по специальности 23.00.01 “Теория политической науки”. Защита диссертации состоится 30 июня 2026 г, в 13:30 часов на действующем в ЕГУ специализированном совете 056 "Политология и международные отношения" МОНКС КВОН РА (адрес: РА, г. Ереван, 0025, Алека Манукяна, 1).

РЕЗЮМЕ

Цель данной диссертации – проведение всестороннего исследования и углубленного анализа теоретических и концептуальных основ, процедур управления и существующей правовой и политической среды в области биобезопасности в Республике Армения. Особое внимание уделяется оценке и изучению фактора стабильности политических институтов в процессе противодействия биологическим угрозам, а также механизмам взаимодействия и принятия решений между государственными органами. Исследование направлено на выявление предпосылок для создания системы биобезопасности в Республике Армения и рассмотрение необходимости и эффективности внедрения централизованной модели управления в этой области.

Структура диссертации. Диссертация состоит из введения, трех основных глав, заключения и списка использованной литературы.

Введение диссертации обосновывает актуальность темы, определяет объект, предмет, цель и задачи, представляет теоретико-методологическую основу и научную новизну работы, теоретическое и прикладное значение работы, а также указывает информацию о ее апробации и структуре.

Первая глава, «Теоретические и оперативные основы биобезопасности», посвящена теоретическому обоснованию исследования, целью которого является создание прочной концептуальной основы для анализа содержательного восприятия и сферы применения термина «биобезопасность», а также определение его места и роли в системе национальной безопасности государства.

Вторая глава, «Политические механизмы обеспечения биобезопасности и международные процедуры управления», углубляется в изучение практики биобезопасности, опыта экономически развитых стран, с акцентом на эффективность борьбы с биологическими угрозами в контексте различных стран.

Третья глава, «Правовые и политические предпосылки создания сектора биобезопасности в Республике Армения и перспективы развития», посвящена изучению текущего состояния процесса биобезопасности в Республике Армения, а также стратегическим подходам и стандартам повышения эффективности государственного и политического управления в этом секторе.

В заключении подводятся итоги исследования. Данная работа подтверждает главный тезис о том, что биологический фактор оказал решающее влияние на традиционные представления об угрозах, коренным образом изменив концептуальную логику и приоритеты архитектуры национальной безопасности государств.

VARDANYAN BAGRAT LERNIK

DOMESTIC AND INTERNATIONAL PROCEDURES FOR ENSURING BIOSECURITY IN THE REPUBLIC OF ARMENIA

Dissertation under 23.00.01 "Theory of Political Science," aspiring to earn Ph.D. in Political Sciences. The defense of the dissertation will take place on 30 June 2026, at 13:30 at the Specialized Council 056 "Political Sciences and International Relations" of the RA MoESCS HESC, operating at Yerevan State University (Address: RA, Yerevan, 0025, 1 Alex Manoogian).

SUMMARY

The purpose of this dissertation is to conduct a comprehensive study and in-depth analysis of the theoretical and conceptual foundations, management procedures, and the existing legal and political environment in the field of biosafety in the Republic of Armenia. Particular attention is paid to assessing and studying the stability of political institutions in countering biological threats, as well as the mechanisms of interaction and decision-making between government agencies. The study aims to identify the prerequisites for the creation of a biosafety system in the Republic of Armenia and examine the need and effectiveness of implementing a centralized management model in this area.

Dissertation Structure. The dissertation consists of an introduction, three main chapters, a conclusion, and a list of references.

The introduction substantiates the relevance of the topic, defines the object, subject, purpose, and objectives of the dissertation, presents the theoretical and methodological basis and scientific novelty of the work, the theoretical and applied significance of the work, and provides information on its validation and structure.

The first chapter, "Theoretical and Operational Foundations of Biosecurity," is devoted to the theoretical underpinning of the study, the purpose of which is to create a solid conceptual foundation for analyzing the substantive perception and scope of application of the term "biosecurity," as well as to define its place and role in the national security system of a state.

The second chapter, "Political Mechanisms for Ensuring Biosecurity and International Governance Procedures," delves into biosecurity practices and the experiences of economically developed countries, focusing on the effectiveness of combating biological threats in the context of various countries.

The third chapter, "Legal and Political Prerequisites for the Creation of the Biosecurity Sector in the Republic of Armenia and Development Prospects," examines the current state of biosecurity in the Republic of Armenia, as well as strategic approaches and standards for enhancing the effectiveness of public and political governance in this sector.

The conclusion summarizes the findings of the study. This work confirms the main thesis that the biological factor has had a decisive influence on traditional perceptions of threats, fundamentally changing the conceptual logic and priorities of national security architecture.